ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՕՀԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ
Կոտայքի մարզի Անանիա Շիրակացու անվան համար 6 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
էլփոստ՝ lilit.ohanyan.76@mail.ru

Հոդվածի նպատակն է ներկայացնել դասավանդման մի շարք մեթոդներ, որոնք կօգնեն սովորողների մոտ ձևավորելու մշակութային գրագիտություն և գեղագիտական ճաշակ, հետաքրքրություն առաջացնելու գրականության և արվեստի այլ ճյուղերի հանդեպ:

Նշված են այն խնդիրները, որոնք կօգնեն իրագործելու այդ նպատակը:

1. Աշակերտի մոտ զարգացնել ստեղծագործական նյութը ընկալելու և վերլուծելու կարողությունը:

2. Զարգացնել գրավոր և բանավոր խոսքը:

3.Արժևորել սեփական ինքնության գիտակցությունը՝ չկտրվելով մարդկային քաղաքակրթությունից և համաշխարհային մշակույթից:

4. Աշակերտներին սովորեցնել նյութը համակարգել, կատարել ստեղծագործական և հետազոտական աշխատանք, բանավիճել, համադրել և հակադրել երևույթները, եզրահանգումներ անել և տարբերել կարևորը երկրորդականից:

Այս խնդիրներն իրագործելու համար նշված են մի շարք ավանդական և ժամանակակից մեթոդներ՝

1. շրջագայություն տեքստի բաժիններով,

2. կարծիքների շտեմարանի կազմում,

3. զուգադրության աղյուսակ,

4. կրկնակի գրառումների աղյուսակ,

5. բանավեճ,

6. Ֆրայերի մեթոդ:

Այս մեթոդների կիրառումով կարելի է բացահայտել գրականության մեջ թաքնված գեղեցիկը, գտնել երեխայի հոգեբանության վրա ազդող միջոցները, սիրել տալ առարկան, բացահայտել խոսքի մեղեդայնությունը և գունագեղությունը:

Բանալի բառեր՝ *գեղագիտական ճաշակ, գրականություն, բնապատկեր, երաժշտություն, նկարչություն, հուզականություն, երևակայության զարգացում, խոսքի պատկերավորություն, ոճ, կարծիքների շտեմարան, ստեղծագործական-որոնողական աշխատանք:*

Մեր օրերում,երբ մամուլն ու եթերը ողողված են գեղագիտական ցածր մակարդակի նյութերով ու երաժշտությամբ, կրկին ու կրկին կարևորվում է դպրոցի և ուսուցչի դերը սովորողների գեղագիտական ճաշակի զարգացման գործում: Հատկապես գրականության դասաժամերն այդ հնարավորությունը տալիս են:

Գրականությունը, մասնավորապես պոեզիան չունեն հստակ ձևակերպումներ, կանոններ, որոնք կհեշտացնեին այդ առարկայի ուսուցումը: Ամբողջ խնդիրը երեխայի հուզական աշխարհի վրա ներգործելն է:

«Պոեզիա» բառը հունարեն է և նշանակում է արարում, ստեղծում[1]: Բայց այն նաև նշանակում է միտք, հույզ, զգացմունք, սեր,կատարելության հասնելու կրքոտ ձգտում, մարդու սիրտը ազնվացնող ու հոգին մաքրագործող լուսավոր երգ:

Գարսիա Լորկայի դիպուկ բնորոշմամբ՝ բոլոր իրերը գաղտնիք ունեն, իսկ պոեզիան բոլոր իրերի գաղտնիքն է: Արդյո՞ք բոլոր մարդիկ են ունակ բացահայտելու այդ գաղտնիքը և զգալու գեղեցիկը:

Ուսուցչի խնդիրն է բացահայտել գրականության մեջ թաքնված գեղեցիկը, դա փոխանցել երեխային և սիրել տալ առարկան:

Յուրաքանչյուր դասի հաջողություն պայմանավորված է մի շարք գործոններով՝ ուսուցչի նպատակով, ուսուցանվող նյութի բովանդակությամբ, դասարանի նախասիրություններով, աշակերտների գիտելիքների մակարդակով և այլն: Պետք է նշել, որ բնավ կարևոր չէ, թե որ մեթոդներով պետք է հասնել դասի արդյունավետության բարձրացմանը՝ ավանդակա՞ն, թե՞ ժամանակակից, կարևորը արդյունքն է:

Բերեմ մի շարք օրինակներ, որոնք, ըստ իս ,արդյունավետ են եղել իմ գործունեության ընթացքում:

Անցնում եմ Ա. Բակունցի «Միրհավը» պատմվածքից մի հատված 6-րդ դասարանում: Տեքստը նկարագրական է, չունի սյուժե, ուրեմն պիտի գտնել

[1] Վ. Դավթյան, Ի սկզբանե էր բանն, հոդվածներ, էսսեներ, Երևան, 1989, էջ 3:

այնպիսի միջոցներ, որոնք կօգնեն բնագրի բանաստեղծական բովանդակության բացահայտմանը:

Հատվածն աշնան մասին է: Աշնանային բնանկարը կարդալիս կարելի է ցուցադրել որևէ նկարչի, ասենք, Մ. Սարյանի կտավները, համադրել պատմվածքի գույները կտավի գույներին, որոնք մեր բնաշխարհի գույներն են: Այդպես նկարը կօգնի բնապատկերի տեսողական ընկալմանը: Իսկ եթե աշակերտները լսեն նաև աշնանը նվիրված որևէ երաժշտական ստեղծագործություն, ապա հնչյունների օգնությամբ կապահովվի նաև հուզականությունը: Տեքստի վրա աշխատելիս երեխաները ներկայացնում են այն ձայները, որոնք խոսքային արտահայտություն ունեն աշնան նկարագրության մեջ՝ տերևների շրշյունը, տերևաթափի երգը, քամու սուլոցը, երիտասարդ կեռասենիների խշշոցը, սիմինդրի տերևների պողպատահնչյուն ձայնը, աշնան տխուր մեղեդին: Այն, ինչ Սարյանը կարողացել է անել իր ներկապնակի նուրբ երանգներով, Բակունցն անում է խոսքի, բառերի, պատկերների միջոցով, կարողանում է բառերի միջոցով ստեղծել լսողական և տեսողական պատրանք: Իզուր չէ, որ Ավ. Իսահակյանը Բակունցի գործերի մասին գրում է. «Այնքան նուրբ են հյուսված, ասես հեքիաթ են, կարծես երազ ես տեսնում»[1]:

Իսկ ինչպե՞ս մղել աշակերտին դեպի այդ գեղեցկությունը: Կարելի է կիրառել տարբեր միջոցներ: Օրինակ՝

Առաջադրանքներ՝ փոխրածավալ շարադրանքի համար:

1. Մտովի պատկերացրու՛, թե քայլում ես արահետով դեպի կապտավուն լեռները: Նկարագրի՛ր պատկերացրածդ:

2. Ինչի՞ մասին կարող էր մտածել արևածաղիկը, որ ժպտում էր և օրորում դեղին գլուխը:

3. Ի՞նչ տրամադրություն է առաջացնում ձեր մեջ աշնան նկարագրությունը՝ սեր, կարոտ, տխրություն…: Ինքնուրույն նկարագրել աշնան մի տեսարան:

Կան շարադրանքներ, որոնք պահանջում են մտքերի որոշակի հաջորդականություն, պատճառահետևանքային կապերի բացահայտում և այլն, իսկ նկարագրական շարադրությունը ճկուն է և մեծ է ստեղծագործելու հնարավորությունը, երեխան ազատ է իր երևակայության հետ: Բայց նա միայ-

[1] Ավ. Իսահակյան, Երկեր, Հատոր IV, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 175:

նակ կարող է գլուխ չհանել, ուստի պետք է նրան կողմնորոշել, օգնել: Այսպես՝

1. Հուշումներ անել և ուղղորդել:

Ա. Աշունը նկարիչ է:

Բ. Արևը երկնային դիցուհի է:

Գ. Սարերը հսկաներ են:

2. Գրատախտակին գրել բառեր և առաջարկել դրանք կիրառել փոխաբերական իմաստով՝ նկարել, օրորել, շշնջալ, ժպտալ և այլն:

Օգնել, որ կազմեն համեմատություններ ,փոխաբերություններ, գտնեն ինքնատիպ մակդիրներ:

Դասարանում նպատակահարմար է կարդալ Ավ.Իսահակյանի խոսքը Ակ. Բակունցի մասին և հարց ձևակերպել: Դիմելով Մ. Սարյանին՝ Իսահակյանն ասել է. «Հայաստանում կա մի գրող, որի բառերը երգում են կոմիտասյան հանգով և փայլատակում քո կտավների բոլոր գույներով:Այդ գրողը Ակսել Բակունցն է»[1]:

Հարց.

- Ձեր կարծիքով՝ ո՞ր բառերը այս տեքստում կարող են «երգել կոմիտասյան հանգով»:

Կարելի է աշակերտներին հանձնարարել գրել մեկական նախադասություն աշնան մասին, ապա առանձին խմբերի առաջարկել տրամաբանորեն դասավորել այդ նախադասությունները՝ ստանալով կապակցված խոսք: Այդպիսի մոտեցումը կօգնի, որ աշակերտն առնչվի ինչ-ի և ինչպես-ի հետ, կարողանա միտքը տրամաբանորեն զարգացնել, տալ նաև հնարավորություն որոշ փոփոխություններ կատարելու, եթե անհրաժեշտ է:

Պետք է միշտ հետևել խոսքի պատկերավորությանը, որը ամենադժվարն է:

Բանաստեղծություն նշանակում է երգ, տաղ: Այն ունի ներքին երաժշտություն, որից մենք հնարավորինս պետք է օգտվենք՝ երեխաների մոտ բարձր արվեստի հանդեպ սեր արթնացնելու նպատակով: Նույնիսկ քերականական նյութի ուսուցումը կարելի է իրականացնել ժողովրդական երգերի միջոցով: Ոչ մի ստեղծագործություն այնքան հարուստ չէ ձայներով, կոչերով, մարդու զգացական ապրումներն արտահայտող բացականչություններով, որքան ժողովրդական խաղիկները, որոնց հրաշալի գիտակն էր

[1] Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986, էջ 3:

Կոմիտասը: Այդ երգերի միջոցով հեշտ է զգալ մարդկանց հույզերը: Ահա, <<Ձայնարկություն>> թեման ուսուցանելու լավ միջոց են Կոմիտասի մշակած ժողովրդական գեղջկական երգերը, որոնք և՛ գեղագիտական ճաշակ են զարգացնում, և՛ խոսքային միջավայրում ավելի ճիշտ է ընկալվում այդ խոսքի մասը: Ահա, օրինակ, «Խումար» կատակ-պարերգը.[1]

Խումար պառկե երես բաց,
Հո՛պ,հո՛պ,հոպպըտա, դըմբա,
Դեղին կարպետ,բմբուլ բարձ,
Հոպ,հոպ, հոպպըտա,դըմբա:
Հե՛յ, հե՛յ, լավն է, հե՛յ, հե՛յ, լավն է,
Հե՛յ, հե՛յ, լավն է, հե՛յ, լավն է:

Երգի կատարումից հետո երեխաները գտնում են կոչական ձայնարկությունները և բացատրում, որ դրանք արտահայտում են կոչ,կանչ, խրախույս:

Կամ՝
Այ՛աղջիկ, ծամո՛վ աղջիկ,[2]
Վա՛յ, ծամով աղջիկ,
Շաքարից համով աղջիկ…

Ա՛յ,վա՛յ- կոչական և զգացական ձայնարկություններ են:

Ահա նաև «Զար,զընգը» հրաշալի երգը՝ համեմված հետաքրքիր ձայնարկություններով.[3]

Զար,զընգը,զար,զընգը թող զընգա,
Պարենք գիշեր լուսընկա,
Զար, զընգը, զար, զընգը թող սընգա,
Էս գիշեր,լուսնակ գիշեր,
Զար,զընգը,զար,զընգը թող զընգա:

Այդ կանչերը, անշուշտ, նմանաձայնական ձայնարկությունների հետաքրքիր օրինակներ են, իսկ «զ» բաղաձայնի կուտակումը ավելի է ընդգծում երգի մեղեդայնությունը: Այս երգերն առանց ձայնարկությունների կկորցնեն իրենց հուզականությունը:

6-րդ դասարանում երեխաներն անցնում են Լեոնարդո դա Վինչիի «Որդիական երախտագիտություն»[1] ստեղծագործությունը: Ինչպե՞ս գտնել

[1] Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր II, Խմբերգեր, Երևան, 1965, էջ 69:
[2] Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր V, Մեներգեր և խմբերգեր, էջ 108:
[3] Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր III, Խմբերգեր, Երևան, 1969, էջ 47:

մատուցման հետաքրքիր ձև: Այս հարցում կարող է օգնության գալ կերպարվեստը, մասնավորապես գերմանացի նկարիչ Ալբրեխտ Դյուրերի «Աղոթող ձեռքեր» կտավը: «Որդիական երախտագիտություն» պատմվածքը ծեր ծնողներին օգնության հասած որդիների հոգատարության, ուշադրության և երախտագիտության մասին է: Տեսնելով ծնողների անօգնականությունը՝ հոպոպները անմիջապես իրար իմաց են տալիս, և ամեն մեկը մի ձևով սփոփում և ամոքում է նրանց, կյանքի կոչում և փորձում մի փոքր վարձահատույց լինել այն ամենի համար, ինչ արել են նրանք իրենց համար:

Թեման ավելի հասկանալի և դյուրամարս դարձնելու համար նախ կարդում ենք տեքստը, ապա կատարում շրջագայություն տեքստի բաժիններով, կատարում կարևոր մտքերի առանձնացում, կազմակերպում գաղափարների մտագրոհ, կազմում կարծիքների շտեմարան:

Թեման ավելի հետաքրքիր մատուցելու համար զուգահեռներ ենք անցկացնում վերոհիշյալ նկարի հետ: Դա կարելի է անել խթանման փուլում: Նախ կարելի է ցուցադրել նկարը, հետո պահանջել, որ երեխաները բնութագրեն ձեռքերը, որոնք տեսնում են նկարում, ապա մղել ստեղծագործական որոնումների. ինչպիսի՞ն կլինի, ըստ իրենց, նկարի տերը, դեպի ու՞ր են ուղղված ձեռքերը, ինչու՞ միայն ձեռքեր են նկարված, ինչպիսի՞ն են այդ ձեռքերը, ի՞նչ են պատմում դրանք տիրոջ մասին: Աշակերտները փորձում են կռահումներ անել. դրանով նրանք մղվում եմ ստեղծագործական-որոնողական աշխատանքի: Եթե ուսուցիչը շտապում է իր կարծիքը մատուցել, երեխային զրկում է ինքնուրույն մտածելու ունակությունից, որովհետև երեխայի համար ուսուցչի կարծիքը միշտ ճիշտ է: Պետք է թույլ տալ, որ երեխան մտածի, զարգացնի իր գաղափարները, ձևակերպի դրանք, ներկայացնի իր կարծիքը, լսի այլ կարծիքներ, մտքեր փոխանակի, նոր կարողանա հանգել որոշակի եզրակացության, որից հետո կարելի է ամփոփել այդ կարծիքները, ապա հաղորդել նոր տեղեկություններ:

Այս ամենը կազմակերպելուց հետո կարելի է ներկայացնել նկարի ստեղծագործական պատմությունը[2]:

Կազմակերպում ենք քննարկում.նախ պետք է որոշել հերոսների արարքների դրդապատճառները, հետևանքները, ապա սահմանում ենք հիմնական գաղափարը, հիշում նմանօրինակ դեպքեր կյանքից, բնութա-

[1] Դ. Գյուրջյան, Թ. Ալեքսանյան, Ա.Գալստյան, Մայրենի 6, Երևան 2016, էջ 70
[2] https://www.iammedia.am/hy/post/Albrecht-Djurers-painting-Hands-the-touching-story

գրում հերոսներին: Ուսուցիչը պետք է օգնի, որ մտքերը ճիշտ ձևակերպվեն, խրախուսի տարակարծությունները, բանավեճը, լրացնի աշակերտներին:

Նկարի ստեղծագործական պատմությունն իմանալուց հետո երեխաները արդեն կարող են կատարել համեմատություններ, նշել նմանություններն ու տարբերությունները, մտորել, թե ո՞ր միջոցն է առավել խոսուն՝ խո՞սքը, թե՞ նկարչական պատկերը:

Քանի որ գաղափարն արդեն ներմուծված է, կարելի է անցում կատարել կշռադատման փուլին. կազմել զուգադրության աղյուսակ, կատարել թռուցիկ գրառումներ, կազմել կարծիքների շտեմարան և թեման ամփոփել Ֆրայերի մեթոդով.[1]

Էական բնութագրեր	**Թեմա**	Ոչ էական բնութագրեր
Օրինակներ		Անհամապատասխան օրինակներ

ՖՐԱՅԵՐԻ ՄՈԴԵԼ



[1] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2005, էջ 245:

Աշակերտներն ընդգրկվում են որոնողական-հետազոտական աշխատանքներում, մտածում են, գտնում օրինակներ, դասդասում համապատասխան բաժիններում, բնութագրում, տարբերում կարևորը անկարևորից, հակադրում ճիշտը սխալին, կատարում զուգորդումներ, հաստատում են կամ մերժում, այսինքն՝ հանգում հիմնական գաղափարի բացահայտմանը:

Այսպիսով, բոլոր դեպքերում ուսուցման գերնպատակը պետք է լինի ինքնուրույն մտածողության խթանումը և ուսուցչից ունեցած կախվածության հաղթահարումը: Հիշենք մեծ մտածողի խոսքերը. «Սովորողի գլուխը անոթ չէ, որ պետք է լցնել,այլ ջահ է, որ պիտի բոցավառել»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Արնաուդյան, Իզ. Օհանովա, Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան, Ձեռնարկ ուսուցիչների համար, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2005, 336 էջ:
2. Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986, 670 էջ:
3. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, 2016, 239 էջ:
4. Վ. Դավթյան, Ի սկզբանե էր բանն, Հոդվածներ, էսսեներ, Երևան, 1989, 605 էջ:
5. Ավ. Իսահակյան, Երկեր, Հատոր IV, Երևան, 1959, 522 էջ:
6. Կոմիտաս, Երկերի ժողովածու, Խմբերգեր, Հատոր II, Երևան, 1965, 279 էջ:
7. Կոմիտաս, Երկերի ժողովածու, Խմբերգեր, Հատոր III, Երևան, 1969, 307 էջ:
8. Կոնիտաս, Երկերի ժողովածու, Մեներգեր և խմբերգեր, Հատոր V, Երևան, 1979, 210 էջ:

PROBLEMS OF AESTHETIC EDUCATION IN MIDDLE GRADES

OHANYAN LILIT
Teacher of Armenian language and literature
e-mail: lilit.ohanyan.76@mail.ru

In the following article we tried to identify the connection between literature and other branches of art, to show how traditional and modern teaching methods can develop the aesthetic taste of schoolchildren, encourage them to research, compare and contrast phenomena, teach them to perceive and evaluate a person, actions and natural phenomena. The article is intended for middle school teachers.

Key words: *Aesthetic taste, literature, landscape, music, painting, emotion, development of imagination, speech imagery, style, database of opinions, creative-search work.*

ПРОБЛЕМЫ ЭСТЕТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ В СРЕДНИХ КЛАССАХ

ОГАНЯН ЛИЛИТ
Преподаватель армянского языка и литературы
электронная почта: lilit.ohanyan.76@mail.ru

В данной статье мы попытались выявить связь литературы с другими отраслями искусства, показать, как традиционные и современные методы обучения могут развить эстетический вкус школьников, подтолкнуть их к исследованию, сопоставлению и противопоставлению явлений, научить воспринимать и оценивать человека, действия и явления природы. Статья предназначена для учителей средних классов.

Ключевые слова: *Эстетический вкус, литература, пейзаж, музыка, живопись, эмоции, развитие воображения, образность речи, стиль, база мнений, творческая-поисковая работа.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 19.09.2021թ.: